Հաշվետվություն

2023 թվականի մարտի 20-23-ը Մալթայի Հանրապետության Վալետտա քաղաք կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սուրեն Թովմասյան
   Գևորգ Սարդարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավար
   Կադաստրի կոմիտեի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ - գլխավոր հաշվապահ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Մալթայի Հանրապետություն, Վալետտա, 2023 թվականի մարտի 20-ից 23-ը

4. **Հրավիրող կողմը.**
   «Եվրոգեոգրաֆիքս» կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Եվրոգեոգրաֆիքս» կազմակերպության գլխավոր համաժողովին

6. **Քննարկված թեմաները.**
   Համաժողովի ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները.
   - Հասցեավորման համաշխարհային մարտահրավերները,
   - Արհեստական բանականությանը վերաբերող հարցեր,
   - Աշխարհագրական տվյալների տրամադրման ոլորտում ռազմական և քաղաքացիական կառույցների համագործակցության հետ կապված հարցեր,
   - Բարձր ճշտության տվյալներ,
   - Բաց տվյալները և դրանց ազդեցությունը անդամ պետությունների տնտեսական և սոցիալական ցուցանիշների վրա,
   - «Եվրոգեոգրաֆիքսի» 2023 թվականի գործառնական ծրագրի, ֆինանսական հաշվետվությունների քննարկումներ և հաստատում,

- Բյուջեի և դրա շրջանակներում կատարված գերծախսերի քննարկում, բյուջեի հաստատում,
- Կառավարման խորհրդի 3 անդամների ընտրություն:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

«Եվրոգեոգրաֆիքս» կազմակերպության գլխավոր համաժողովի շրջանակներում օրակարգային հարցերի վերաբերյալ շնորհանդեսներով են հադես եկել կազմակերպության ղեկավար կազմի անդամները: Կայացան կլոր սեղանի ձևաչափով քննարկումներ՝ Նորարարական տեխնոլոգիաների գովազդ, Բաց քարտեզագրական տվյալներ և օրակարգով նախատեսված հարցերի վերաբերյալ:

Հայկական կողմի նախաձեռնությամբ կայացան նաև երկկողմ մի շարք հանդիպումներ՝ Իսպանիայի, Շվեդիայի և Նիդերլանդեների պատվիրակությունների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ինչպես նաև հետագա համագործակցության հնարավոր ուղղությունները:

Համաժողովի վերջին օրն անցկացվել են քննարկումներ կազմակերպության կառավարման խորհրդի անդամների ընտրության, տարեկան բյուջեի և տարեկան գործողությունների ծրագրի վերաբերյալ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համաժողովի ընթացքում կոմիտեի ներկայացուցիչների ունեցած երկկողմ հանդիպումների ընթացքում փոխգործակցության մի շարք պայմանավորվածություններ են ձեռք բերվել: Մասնավորապես՝ Նիդերլանդների գործընկերների հետ քննարկվել են ընթացիկ ծրագրերի շարունակականության ապահովման և նոր ուղղությունների մշակման անհրաժեշտությունը:

Իսպանիայի կադաստրի ներկայացուցչի հետ հանդիպման ժամանակ քննարկվել է տարեկան հանդիպումների միջոցով համագործակցության խորացման և այն զարգացնելու հնարավորությունները:

Շվեդիայի պատվիրակության ներկայացուցիչների հետ կայացել են կառուցողական և առարկայական քննարկումներ՝ ոլորտում իրականացվող բարեփոխումների, այդ գործընթացում եվրոպական առաջավոր փորձի կիրառման հնարավորության և արտասահմանյան գործընկերների հնարավոր աջակցության վերաբերյալ:

Հատկանշական ձեռքբերում է կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանի՝ կազմակերպության կառավարման խորհրդի անդամի պաշտոնում ընտրվելը: 2007 թվականից անդամակցելով Եվրոգեոգրաֆիքսին սա առաջին դեպքն է, երբ ի թիվս կազմակերպությանն անդամակցող բազմաթիվ եվրոպական երկրների, կոմիտեի ղեկավարը ներկայացնում է Կոմիտեն նման հեղինակավոր կազմակերպության խորհրդի կազմում:

Համաժողովի ընթացքում հաստատվեցին նաև տարեկան բյուջեն և տարեկան գործողությունների ծրագիրը, ինչպես նաև որոշվեց կազմակերպության 2024 թվականի գլխավոր համաժողովն անցկացնել Իսպանիայում:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվեց շարունակել համագործակցությունը համատեղ ծրագրերի, առաջարկությունների շրջանակներում, մշակել ռազմավարական նոր ուղիներ, աշխատել հավաստի տվյալների տրամադրման, շահագրգիռ կողմերի միջև առավել արդյունավետ հաղորդակցության ապահովման ուղղությամբ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Սուրեն Թովմասյան

Գևորգ Սարդարյան

27.03.2023 թ.